# ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՍՔԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նիստերի դահլիճը լեփ-լեցուն է։ Այստեղ հավաքվել են ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամները՝ անվանի գիտնականները, պրոֆեսոր-դոկտորները, գիտության թեկնածուները։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման պետական Երրորդ փոխառություն բաց թողնելու լուրը ժողովականներն ընդունում են բուռն խանդավառությամբ։

«Այս փոխառությունը մի նոր, հուժկու հարված է ռեակցիայի ջատագովներին, որոնք նոր պատերազմ են հրահրում։ Բաժնեգրվում եմ երկու ամսվա աշխատավարձի չափով՝ 40 հազար ռուբլով»,—ասում է Մոսկվայից ուղարկած իր հեռագրում Հայկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ ընկ. Վ. Համբարձումյանը։ Մեկը մյուսի ետևից հանդես են գալիս գիտնականները և բաժնեգրվում նոր փոխառությանը։

— Մեր խնայած միջոցներով, որ պահ ենք տալիս պետությանը, հանրօգուտ գործ ենք կատարում, օգնում կոմունիզմի շինարարության վեհ գործին,— ասում է Գիտությունների Ակադեմիայի վից-պրեզիդենտ ընկ. Վ. Գուլքանյանը, որը բաժնեգրվում է երկու ամսվա աշխատավարձի չափով՝ 30 հազար ռուբլով։

Սրտառուչ ելույթ է ունենում ԳԱ թղթակից-անդամ պրոֆ.-դոկտոր Ա. Ղարիբյանը։ Ջերմորեն ողջունելով կառավարության նոր ձեռնարկումը և բաժնեգրվելով երկու ամսվա աշխատավարձի չափով, ասում է.

— Այն վիթխարի շենքը, որ կառուցվում է ժողովրդի միջոցներով, անսասան կլինի։

ԳԱ իսկական անդամներ ընկ. ընկ. Հ. Բունիաթյանը, Ի. Եղիազարյանը, Մ. Թումանյանը բաժնեգրվում են երկու ամսվա աշխատավարձի չափով՝ յուրաքանչյուրը 20 հազար ռուբլով, Ա. Հովհաննիսյանը՝ 17 հազար ռուբլով, Լ. Հովհաննիսյանը՝ 13.500 ռուբլով, գիտնական քարտուղար Գ. Պետրոսյանը՝ 9.350 ռուբլով, արտասահմանից ներգաղթած պրոֆ.-դոկտոր, ԳԱ թղթակից-անդամ Մ. Տեր-Կարապետյանը՝ մեկ և կես ամսվա աշխատավարձի չափով։

Մեկ ժամվա ընթացքում Ակադեմիայի բոլոր ինստիտուտների և գիտա-հետազոտական մյուս հաստատությունների աշխատողները նոր փոխառությանը բաժնեգրվեցին ավելի քան մեկ և կես միլիոն ռուբլու չափով։

Բաժնեգրությունը շարունակվում է։